

Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2017թ-ի

առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

03.07.2017թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Ջոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝ Ն. Գևորգյանը, հայփոստի աշխատակիցուհին, բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհին : Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2017թ. հուլիսի 3-ի դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 57 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2017թ. հուլիսի 3-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 230 տեղեկանք, ստացել 80 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 1.280.000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 200.000 (երկու հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 360.000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ:

Կառավարության կողմից սուբսիդավորված 1 պարկը 6000դրամով ազոտական, 7000 դրամով կալիումական, 7000դրամով ֆոսֆորական պարարտանյութեր է հատկացվել բնակչներին:

2017թ առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների

1.Հողի հարկ – 2.045.000

2.Գույքահարկ –1.285.000

3.Տեղական տուրքեր –281.500



Լ. Աբրահամյան